

ՆԻՄՆԱՐԿԷՔ ՇԱՐԼՕԹԻ ՆԱՅ ՆԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ

Կիրակի, Մարտ 28, 2004, աւելի քան 300 հաւարացեալներու ներկայութեան Գերշ. Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեան պաշտօնական արարողութեամբ հիմնարկէքը կապարեց Շարլօթի (Նորթ Գարօլայնա) առաջին հայկական եկեղեցին:

Ինն փարի առաջ՝ հագիւ քանի մը հայ ընտանիքներ բնակութիւն հաստատած էին Շարլօթի մէջ: Այժմ այնպէղ հաստատուած են աւելի քան 200 ընտանիքներ, որոնցմէ միայն 100 ընտանիքը ներկայ կը գտնուի ամիսը անգամ մը մատուցող Ս. Պարարագին եւ կազմակերպուած ծխական ձեռնարկներուն: «Միշըն» ծուխը ունի Միսական Խորհուրդ մը, որուն ժրաջան եւ գործունեայ արեւնապետիին է Տիկին Քիւիլէեան-Նէօ:

Ծուխի անդամներու, եւ գլխաւորաբար Զաւէն եւ Յակոբ Թուրքեան եղբայրներու, նուիրաւորութեամբ չորս փարի առաջ կարելի եղած է եկեղեցոյ հողը գնել: Սակայն նիւթական դժուարութեան պարճառաւ եկեղեցոյ կառուցումը յետաձգուած է, մինչեւ այն արեւն՝ երբ Ֆիլարելֆիաբնակ բարերար Տիար Սարգիս Ակոբեան, ի յիշարակ իր մօր՝ Արաքսի 1,700,000 փողարի նուիրաւորութիւն մը կը կարարէ: Նոր եկեղեցին կառուցանելու համար:

Հիմնարկէքի արարողութեան ներկայ էին նաեւ բարերար Տիար Սարգիս Ակոբեան եւ փիկիներ՝ Պապի, գաւակը՝ Կրեկորի, թռռնիկը՝ Շիա, եւ հարսը՝ Նելեն:

Տիկին Քիւիլէեան-Նէօ ըսաւ. «Մեր ծուխին համար այս պարմական օրը ուրախութեան, երջանկութեան, յուզումի եւ երագի մը իրականացման օրն է: Չորս փարի շարունակ աղօթեցինք Աստուծոյ՝ որպէսզի մեզի միջոցները ներկայացնէ եկեղեցի մը կառուցանելու: Երբեք չյուսահարեցանք: Եւ Աստուած պարասխանեց մեր աղօթքներուն: Չեմ գիտեր, որ Տիար Ակոբեան ինչո՞ւ Շարլօթի ծուխը ընտրեց: Ես այնքան աղօթեցի, որ թերեւս երկնքի մէջ մայրս այս մասին խօսեցաւ Տիար Ակոբեանի մօր հետ»:

Ծուխի այցելու հովիւ Նոգշ. Տ. Դանիէլ վրդ. Ֆրնարքեան այս բարի լուրը հաղորդած էր փարույս Փետրուար 20-ին՝ երբ Ս. Պարարագ մատուցանելու համար Շարլօթ կը գտնուէր: Նայր Սուրբը այս կապակցութեամբ ըսաւ. «Մենք կը փօսենք Աստուծոյ խորհուրդին հրաշագործ ներգործութիւնը Շարլօթի ծուխին մէջ: Աստուած մեզի դրկեց հրեշտակ մը, որ նոյնիսկ Շարլօթի մէջ չ'ապիր: Աստուած անոր քայլերը առաջնորդեց դէպի այս ծուխը»:

Առաջնորդ Սրբազան Նայրը իր խօսքին մէջ ըսաւ. «Ես հպարտ եմ ձեր բոլորին իրագործումներով: Ձեր ջանքերը արդիւնատուրեցան շնորհիւ Տիար Սարգիս Ակոբեանի առարածեան նուիրաւորութեան: Ակոբեան ընտանիքը ծանօթ է իր բազմաթիւ բարերարութիւններով այսպէղ Ամերիկայի եւ Մայր Նայրենիքի մէջ: Ակոբեանները սքանչելի ընտանիք մըն են, Նայ ընտանիք մը, եւ ես շար ուրախ եմ, որ անոնք իրենց բարերարութեամբ կ'անդամակցին նաեւ Նորթ Գարօլայնայի այս ընտանիքին»:

Նորակառոյց եկեղեցին, որ պիտի կոչուի Ս. Սարգիս, պիտի օծուի 2005 թուականի Յունուարին՝ Ս. Սարգիսի փօսին:

ԴԻԻՄՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՐՆԻ